




Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ րագրին դէմ:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒՄ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒՄ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒՄ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒՄ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒՄ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒՄ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒՄ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒՄ
 ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒՄ



ՀԱՆՐԱՊԵՏ

ՏԱՍՆՕՐԵԱՅ

هزار آیداق

مجموعه علوم

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 30

10 ԱՆՊՏԵՄԲԵՐ 1902

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏՐԱՄԱԾՈՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՅԿԱՆԻ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԵ

ՀԱՅԿԱՆ, ԶԱՐՈՒՀԻ, ՊԱՐՈՆ ԳԱՐԵԴԻՆ

(Հայկակի տան մէջ սենեակ մը)

ՏԵՍԻՒ Ա.

(Հայկակ մինակ յառաջ գալով)

Տեա՛րք եւ Տիկնայք, (սխալը շփեցու պէս ընելով) կամ Տիկնայք եւ Տեա՛րք. . . եւ Օրիորդք, ասանկը աւելի քաղաքավար կ'ըլլայ. պարոն Հայկակ, ձեր ծառան, պատիւ ունի ծանուցանել ձեզ իր ամուսնութիւնը Օր. Սիրանոյշի հետ, դուստր Պր. Գարեգինի և. կը խնդրէ որ հաճիք ձեր ներկայութեամբ պատուել պսակի արարողութիւնը, որ պիտի կատարուի. . . . Նայի՛նք, ո՛ր պիտի օրհնուին. . . շխտակը եւ ալ չեմ գիտեր, որ լովհետեւ պէտք եղածը լաւ մը կարգադրուած չէ դեռ. այսինքն բան մ'ալ որոշուած չէ: Ե՛ս. մինակ իմ կողմէս հաւանութիւն

արտած է. ե՛ս, կ'ընդունիմ արտանց. իրնդիրը սա է թէ՛ Պ. Գարեգինի դործին կուգայ: Օրիորդ Սիրանոյշի կարծիքը բանի տեղ չեմ դնէր. ինծի պէտ սիրուն մանջու մը ինչո՞ւ չպիտի հաւնի. ես աղուոր տղայ մըն եմ, մինչդեռ ինքը. . . բո՛ւհ: Ա՛խ, արդեօք Պր. Գարեգին ի՞նչ պիտի պատասխանէ որովհետեւ աղուոր դէմք մը ունենալը չը բռներ, պէտք է որ դիրք մըն ալ ունենամ. ամէն հայր աւանկ կ'ըսէ կոր, Բայց ես ինծի դիրք մը չիմած եմ. բժշկական ուսանող եմ, աւելին ի՞նչ կ'ուզեն: Եթէ իրենց բռն, պիտի խնդան: Հարցունեն թէ քանի՞ տարի է որ ուսանող եմ եւ ե՞րբ վերջական պիտի ունենամ. կը հասկնա՛ք, պատասխանելը դործիս չգար:

ՏԵՍԻՒ Բ.

ՀԱՅԿԱՆ, ԶԱՐՈՒՀԻ

Զարուհի. (Ներս մտնելով). Բարի լը՛ս, Հայկակ:

Հայկակ. Գո՛ւն ես, Զարուհի, ի՞նչ կանուի ես ելեր:

Զար. Մեր գիշերօթիկ վարժարանին մէջ ասանկ վարժեցուցած են մեզի: Բունտ ալ չտարաւ. ի՞նչ աղուոր բան, ալ դպրոց չը

պիտի երթամ, տունը մնալը կը սիրեմ: Հետդ քիչ մը խօսիլ ուզեցի. կը յուսայի որ այդ տարիքիդ մէջ ա՛լ կ'ամուսնանաս. քոյր մըն ալ ունենալը հաճելի է ինծի:

Հայկ. Լեւէ՛կ ատենին եկար, ես ալ ատոր վրայ կը մտածէի: Երիտասարդ օրերդ մը կայ. . . (միտքէն). Ի՛նչ երիտասարդ, (բարձր) ուշեցի որ Տիկին Հայկակ անունը ընծայեմ անոր:

Ձար. Շատ աղէ՛կ, նայինք ո՞վ է ատիկա:

Հայկ. Գեղանին Սիրանոյշ, Տիար Գարեգինի աղջիկը:

Ձար. Չեմ ճանչնար ո՞վ են:

Հայկ. Խոշոր տունի մը տէրը. հոսկէ ալ կը տեսնուի (պատահանը կը ցուցնէ), առուտուրի մէջ շատ դրամ շահած է:

Ձար. Ի՞նչ առուտուր:

Հայկ. Միջատասպան փոշի կը ծախէ:

Ձար. Միջատասպան . . . :

Հայկ. Միջատասպան փոշի:

Ձար. Ի՞նչ փոշի է որ աղ:

Հայկ. Սքանչելի փոշի մը, որ բնաջինջ կ'ընէ լուերը, մլուկները, եւ կարգ մը միջատներ որոնք . . . (զլուխը փեղելու պէս կ'ընէ):

Ձար. Հասկցայ:

Հայկ. (Ծանր կերպարանք մը դասելով). Նոյն իսկ ասոր համար Տիար Գարեգին մարդոց բարերարը կը համարուի, նա կը ջնջէ մեր քունը եւ հանգիստը խռովող գազան-միջատները: Եւ փոխանակ անոնց դէմ զէնքով մարտնչելու:

Ձար. (Ընդմիջելով). Փքոցով մը փշել կը յանձնարարէ: Գիտե՛մ: Բայց խնդիրը ատոր վրայ չէ. Ի՞նչպէս աղջիկ է Օր. Սիրանոյշ:

Հայկ. Երեք հազար ոսկի դրամով ունի:

Ձար. Այդ չէ հարցուցածս. սիրո՞ւն է, կրթեա՞լ է, ուսում առա՞ծ է:

Հայկ. Հայրը՝ Թադին ամէնէն հարուստն է, եւ . . . :

Ձար. Ձգէ՛ ատոնք եւ ինծի պատասխան տուր, դուն սիրեցի՞ր:

Հայկ. (Կրակոտ կերպով մը). Հապա՛ (Կամաց) մանուսնդ ոսկինե՛րը:

Ձար. Ուրեմն ամուսնացիր. գնա՛ հօրմէն խնդրէ:

Հայկ. Ուզածս ալ այդ է. բայց նայինք պիտի հաւանի՞ր:

Ձար. Ինչո՞ւ չէ:

Հայկ. Հապա ելլէ ըսէ թէ ինծի փեսայ կ'ընդունի պայմանաւ որ տոբթոր ըլլամ:

Ձար. Ըսելիքը այդ է. բայց ինչո՞ւ վըկայական չես առներ:

Հայկ. Ըսելը դիւրին է: Գիտե՞ս ինչ դժուար քննութիւններ անցնելու է:

Ձար. Բայց կատակը մէկդի. չգիտեմ քանի՞ տարիէ բժշկութիւն կը սորուիս, կարող չե՞ս քննութիւն մը անցնել:

Հայկ. Փրկի՛չ, կարծածիդ չափ դիւրին չէ քննութիւն անցնելը. վեց եօթը հատ են. բժիշկ, գիտուն, տօքթօր, չեմ գիտեր ինչ, որոնց միակ նպատակը քեզի չփոթեցնելն է. վարէն ձայն մը կը լսեմ (պատահանէն վար կը նայի). Պարոն Գարեգինն է. մեր տունէն ներս մտաւ, ի՞նչ կ'ուզէ արդեօք, ինչ եւ է: Քեզի իրեն ներկայացնեմ:

Ձար. Չէ՛, շնորհակալ եմ, վրաս գլուխ չտկուած չէ, ես կ'երթամ կոր (Կ'երթայ):

ՏԵՍԻԼ Գ.

ՀԱՅԱԿ, ՊԱՐՈՆ, ԳԱՐԵԳԻՆ

Հայկ. (Պ. Գարեգինի դէմ կը վազէ խոնարհութիւններ ընելով). Բարե՛ւ, տէր իմ, հըրամեցէք. . . հաճեցէք ներս մտնելու շընորհն ընել . . . բայց ի՞նչ ունիք, կարծեմ կը կաղաք: (Աթոռ մը կուտայ):

Գար. Այո՛, սիրելի դրացիս, շատ կը տառապիմ կոր, չէք կրնար երեւակայել քաշած ցաւս:

Հայկ. Ի՞նչ ունիք դիպուած մը պատահեցաւ:

Գար. Յանցանքը կարպիսինն է չինած կօշիկը անանկ նեղ է որ, ոտքի կոշտերս սոսկալի կերպով կը նեղեն կոր գիս: Հիմա ճաշ ըրած ժամանակս միտքս եկաւ որ դըրացիս Պ. Հայկակ բաւական ատենէ ի վեր բժշկութիւն կը սորուի, գուցէ կրնայ ճար մը . . . ո՛ւֆ, ո՛ւֆ, կոշտերս, սրիկայ՝ կոշտերս, անիծեա՛լ կօշիկ. . . :

Հայկ. (Ծանր ձայնով մը). Կո՛շտ մը, ոտքի կո՛շտ մը, ծանր բան է (բազկերակը կը նայի). հանգիստ կը քնանա՞ք:

Գար. Այո՛:

Հայկ. (Շարունակելով). Հը՛մ, հը՛մ, զարմանալի է: Լեզէկ կուտէ՞ք:

Գար. Հապա՛:

Հայկ. Հը՛մ, հը՛մ, զարմանալի բան. լե-
զուդ ցցուր. (Կարեցին լեզուն դուրս կը հանեն):

Հայկ. (Քննելի ետք). Ատ լեզուն աղէկ
չեղեւարկոր:

Գար. (մտաւնջ). Իրա՞ն:

Հայկ. Ձեր ընտանիքը կոչտ ունենալու
յարմարութիւն ցոյց տուա՞ծ է:

Գար. Ի՞նչ գիտնամ: Հայրս, մեծ հայրս
երբեմն երբեմն ատանկ բանի մը վրայ կը
խօսէին:

Հայկ. (միտ լուրջ ձայնով մը). Մե՛ղք:

Հայկ. Փառք Աստուծոյ, դեռ ողջ էք,
չմեռաք: Շատ բաղդաւոր էք որ ինծի պէս
բժշկի մը ձեռքը ինկաք, դրացի՛ս Հիմա դե-
ղագիր մը պիտի տամ, որ չուտոէ մը բժըշ-
կուիք. (չորս դին նայելով. Ահա՛ թուղթ,
գրիչ ու մելան: (Կը գրէ): Կը խնդրեմ՝ որ
կէտ առ կէտ գործադրէք պատուէրներս:

Գար. Անհոգ եղիք:

Հայկ. (Իեղացիրը կուտայ). Ա՛լ ասկէ դատ
ուրիշ դեղի պէտք չէք ունենար:

Գար. (Կարգալով) « Նոր զոյգ մը կօշիկ



մե՛ղք: Խօսուա՞ծ է որ ձեր ազգականներէն
մէկը այդ ախտէն մեռած ըլլայ:

Գար. (Սարսափանաւ). Ոաքի կոչաէ
մարդ կը մեռնի՞:

Հայկ. (Լուրջ). Եթէ ժամանակին չզար-
մանուի, կամ եթէ աղքեցիկ միջոցներ
ձեռք չառնող բժշկի մը ձեռք իյնաք:

Գար. Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ...
որով մտքէն կ'անցնէր. Երանի՛ թէ ժամա-
նակն անցած չըլլար:

տպապրել Պր. Կարպիսի, եւ մինչեւ որ ա-
նոնք պատրաստուին հողաթափ հագնել: »
(Սեմնչացումով). Նոր զոյգ մը կօշիկ ապշու-
պրել... ես մինակս չպիտի գտնայի տափ-
կա. ի՞նչ հանճար... դեռ ուտանող է. հա-
պա երբ տօքթօր ըլլա՞յ: Շնորհակալ եմ՝ դը-
րացիս, շնորհակալ եմ, անմիջապէս հրա-
մաննիդ պիտի կատարեմ (դուրս կե՛լլէ):

Հայկ. (Ետէն վազելով) Տէ՛ր Գարեգին,
Տէ՛ր Գարեգին... (եւ կը դառնայ): Վա՛ր,

գնաց. ճիշդ ալ ատենն էր խօսելու. Ասկէ աղուոր առիթը չպիտի գտնեմ. Ինծի երախտապարտ ըլլալով չէր կրնար խնդիրքս մերժել. Ասոր կ'ըսեն բաղդ չունենալ. Ինչ եւ է, ես անձամբ կ'երթամ իրենց տունը, իբր թէ հարցնելու համար որ դեղագիրս պատրաստել տուե՞ր է: Շատ կը նեղանամ կոր ձգել երթալուն . . . :

Գար. (Ոսկերը հողաքափով նետ կուգայ). Ներողութիւն, դրացիս, բիւր ներողութիւն ասանկ շուտ մը փախչելուս. կ'ուզէի պատուէրներդ ժամ առաջ կատարել: Նոր զոյգ մը կօշիկ ապսպրեցի, եւ հիմակու հիմա հողաքափներս հագայ: Անմիջապէս ցաւը կտրեցաւ. Որքա՞ն երախտապարտ եմ ձեզի գիտե՞ք: Ներեցէ՛ք, ուրեմն որ (գրպանը կը խառնէ) ձեզի պէս գիտունի մը ծառայութիւնը թէ եւ անգին է, բայց. . (գրպանէն դրամ հանելով Հայկակին ալ կ'ուզէ):

Հայկ. (Փառեգինի ձեռքէն նետ կ'ընելով). Դրացիս, մեզի համար չէ, ես դրամ չեմ առներ, ըրածս զուտ բարեկամութեան համար է:

Գար. (Սփանջացումով). Վարձքը մերժե՛լ, ի՛նչ հողի մեծութիւն, ի՛նչ անշահախընդրութիւն:

Հայկ. Հիները ինծի օրինակ կը բռնեմ. Միթէ Արթաքսէս՝ Իրօքրատի նուէրը չմերժեց:

Գար. Ներեցէ՛ք, ես կը կարծէի թէ՛ Իրօքրատ. . . բայց հարկաւ դուք ինչ ճիշդը գիտէք անշուշտ: Ի՛նչ որ է, դրացիս, կ'ուզեմ որ ձեզի պարտական չմնամ: Բան մը խնդրեցէ՛ք ինչ:

Հայկ. Ձեր բարութենէն համարձակութիւն կ'առնեմ սիրտս բանալու. եթէ գոյգն ծառայութիւնս ձեզի հաճելի երեւցաւ:

Գար. Ըսէ՛ք, մի՛ քաշուիք:

Հայկ. Ձիս ձեր փեսան ընելու շնորհն ըրէ՛ք:

Գար. (զարմացած). Իմ փեսա՞ն:

Հայկ. Այո՛, գեղանի Սիրանոյշի ամուսինը ըլլալուն երջանկութեան կը բաղձամ.

Գար. (Մեկուսի). Գեղանի՛. . . :

Հայկ. Անոր գեղեցկութիւնը շատուց զիս. որչափ ատեն որ իր ամուսինը չըլլամ, ինքզինքս դժբաղդ պիտի համարիմ.

Գար. Աղջիկս տեսած էք,

Հայկ. Այո՛ հաճոյքը վայելած եմ:

Գար. Տեսա՞ր իր. . . (ուսը վեր կ'առնէ կուգ մը հասկցնելու համար).

Հայկ. Ատիկա բան մը չէ:

Գար. Բնաւորութիւնը գիտե՞ս

Հայկ. Այո՛, պարոնտատ:

Գար. Պարոնտատ, դեռ ո՛չ: Գիտնալու ես որ հանդիպող անձը փեսաս չեմ կրնար ընել:

Հայկ. (Վշտացած). Հանդիպողը. . . :

Գար. Ձեզ վշտացնել չեմ ուզեր. . . բայց հարուստ չէ՛ք:

Հայկ. (Ծանր ձայնով մը) Մի՞թէ գիտութիւնը հարստութենէ աւելի չարժեք:

Գար. Իմ ալ կարծիքս այդ է, եւ այդ գիտութիւնը, դրացիս, շիտակը խօսելով, շատ լաւ իւրացուցած էք: Փորձը ես իմ վերաս գիտեմ, տեսէ՛ք, ուղածիս պէս կը քալեմ, կը ցատքեմ, կը պարեմ (կսկսի պարել):

Հայկ. Ձեր զաւկին հարսանիքին ալ պիտի պարէք:

Գար. Հապա՛, հապա՛, միայն թէ այդ հարսնիքը տեղի ունենալու համար պէտք է որ. . . պէտք է որ, պզտիկ բան մը, սանկ ձեր վկայականը ստանայիք, գիտեմ որ ձեզի համար շատ դիւրին է:

Հայկ. (Շփոթած երեւոյթով), Անշուշտ, Տէ՛ր Գարեգին, (դրան զանգակը կը զարնուի ոյծով մը). . . ո՞վ է արդեօք. (նոռէ կը զարնուի). . . կը ներէ՛ք, Տէ՛ր Գարեգին:

Գար. Դացէ՛ք. հանգիստ գործերնիդ նայեցէ՛ք: (Մինակ մնալով). Շիտակը աղուոր բաղդ Սիրանոյշին համար. կուզովր, չգիտեմ ինչովը, անտանելի բնաւորութիւնովը, մէկուն հետ չկրնար սիրով ապրիլ:

ՏԵՍԻՒ Դ.

ԴԱՐԵԳԻՆ, ՀԱՅԿԱԿ, ՋՈՐՈՒՆԻ

(Ջարուհի՝ Մօլիէրի ժամանակուան բժիշկի հագուստ հագած է. սեւ լսեթը, մերմակ վզնոց, ուսագին սրածայր գլխարկ մը):

Հայկ. (Նետ հրաւցնելով ու կմկմալով). Հրամանեցէ՛ք, տէր Տօքթօր, հրամանեցէ՛ք, հաճեցէ՛ք նստելու շնորհն ընել. (քիկնաբոռ մը կուտայ, եւ ցած ձայնով) ո՞վ է այս բռնիչը եւ ի՞նչ կ'ուզէ ինչ:

Ջար. (Մանրութեամբ կը նստի եւ բանի մը անգամ հագալէ ետք) Ո՞վ է այս Պարոնը:

Հայկ. Տէր Գարեգինն է, իմ ազնիւ, բարի գրացիս:

Ձար. (Ահագին ակնոց մը հանելով եւ մեջէն Գարեգինը դիտելով). Այո՛, մեր Տիար Գարեգինն է եղեր, շատ ուրախ եմ ձեզ տեսնելու:

Հայկ. (Ձարուհին նայելով եւ մեկուսի) Ձարուհին է, բայց ինչո՞ւ համար այս հագուստները հագեր է:

Ձար. (Միտ ակնոցին մէջէն նայելով). Աշխարհք կը ճանչնայ Տէր Գարեգինը, Բերլէմբէրգէն միջառասպալան փոշիի հնարքը:

Գար. (Գոն կերպարանով յառաջանալով) Ես ալ, Տէ՛ր տօքթօրաբան, շատ ուրախ եմ որ ոտքս կաշտ մը ունենալով՝ այսինքն գիտուն դրացիիս հանճարին օգնութեան պէտք ունենալու պատիւ կ'ունենամ ճանչնալու նշանաւոր տօքթօր... տօքթօր...:

Ձար. Տօքթօր Մաքրողարան, նոխագահ Լուտեզիայի բժշկական կաճառին եւ անդամ Եւրոպայի, Ասիայի, Ամերիկայի եւ Ովկէանիայի գիտական կաճառներուն (Գարեգին կը խոնարհի): Ըսել է իրա՞ւ Հայկակը այդքան գիտուն է:

Գար. Հապա՛, տօքթօր Մաքրողարան, տեսէ՛ք եւ անձամբ դատեցէ՛ք, մէկ ժամ առաջ չէի կրնար քալել, իսկ հիմա՝ իրեն հըրամաններուն հետեւելով՝ առանց նեղուելու կը պարեմ իսկ... (Կ'սկսի ցատկահարել):

Ձար. (Ձայնը բարձրացնելով) Արդէն անոր հանճարին համբաւը մինչեւ մեզի հասած էր, իմ ընկերներս ու ես զարմացումով կը հարցնէինք թէ ի՞նչպէս կ'ըլլայ որ ասանկ նշանաւոր գիտուն մը մեր կաճառին անդամակցելու համար ո՛ր եւ է զիմում մը չընէր: Ասոր համար մեծանուն ընկերակիցներս խնդրեցին ինչ որ գամ եւ վայն մեր գիտական մարմինին մէջ մտնելու յորդորեմ. Սովորաբար մանրապնին քննութենէ մը ետքն է որ այս պատիւը կը վայելեն ամէն բժիշկները. բայց ասոր պէս հանճարի մը համար, բացառութիւն մը ընել պէտք էր. եւ ես Հարեւանցի քանի մը հարցումներէ ետքը անոր պիտի ընծայեմ տօքթօրական գլխարկը:

Հայկ. (Մեկուսի). Կարծեմ հասկցայ ընելիքը:

Ձար. (Հայկակի). Յառա՛ջ եկուր, պզտիկ գիտունս եւ հարցումներու պատասխանէս:

— Ի՛նչ է ջերմը:

Հայկ. Ջերմը՝ հիւանդութիւն մըն է:

Ձար. Լա՛ւ, հիւանդութիւն մըն է, արդարեւ ջերմ ունեցող մէկը առողջ չկրնար ըլլալ: — Ո՛ւրկէ յառաջ կուգայ այս հիւանդութիւնը:

Հայկ. Որովհետեւ հիւանդը կը դողայ եւ կը զառանցէ:

Ձար. (Գոն). Շատ բարի:

Գար. Ես կը կարծէի թէ ջերմ ունենալուն համար կը դողդալ, ըսել է դողը մարդուն ջերմ կուտայ: Ա՛խ, բան չգիտնալը:

Ձար. Հարբուիս եղող մէկուն ի՞նչ պիտի հրամայես:

Հայկ. Պիտի ըսեմ, հազա՛:

Գար. Ա՛խ գիտութիւնը, գիտութիւնը:

Ձար. Հոպա ի՞նչ գտածո՞ք մէկուն:

Հայկ. Խե՛ր ըլլայ: (Ձարուհի գլուխը կ'օրօրէ հաստաւակաւ ձեւով):

Գար. Ի՞նչ ճարպիկ մարդ:

Ձար. Եթէ մէկուն ակումտ ցաւի, ի՞նչ հրաման պիտի տայիք:

Հայկ. Պիտի ըսեմ որ երթայ ակումտ քաշել տայ:

Ձար. Շատ աղէկ. կը տեսնեմ որ մեծ միջոցներու կը դիմես միշտ, ճիշդ ինծի պէս: Երբ մէկուն թեւը կը ցաւի, թեւը կը կըտրես, նոյնպէս ալ ոտքը, երբ գլուխը կը ցաւի...:

Հայկ. Կարելի է գլուխը կտրել:

Ձար. Աղէ՛կ, աղէ՛կ, կը տեսնեմ որ պատասխաններդ ճիշդ ու բարձր գիտութեամբ լեցուն են: Այսչափը կը բաւէ, երթամ մեր կաճառին յատուկ գտակը բերեմ եւ ձեր գլուխը զարդարեմ անով, միանգամայն շնորհակալ ըլլալով որ մեր խումբին անդամակցելու պատիւը կ'ընէք մեզի: (Դուրս կ'ելլէ):

Գար. Երթամ շուտով Սիրանոյշը կանչեմ հոս, թող ան ալ ականատես ըլլայ քու փառքիդ (Կը մեկնի):

ՏԵՍԻԼ Ե.

ՁԱՐՈՒՀԻ, ՀԱՅԿԱԿ

Ձարուհի. (Իխարկը հանելով). Շունչս հատու, ո՛ւֆ, է՛հ, ի՞նչ կ'ըսես հարաքիս, Հայկա՞կ:

Հայկակ. Սքանչելի է եւ դուն քուրի-
ներուն ամէնէն անուշիկը եւ տօթօրներուն
ամէնէն գիտնականն ես:

Զար. Տեսայ որ օրիորդ Սիրանոյշի հետ
ամուսնանալ շատ կը փափաքիս, եթէ մեր
դրացիին դրած պայմանը կատարելու ել-
լէիր, բաւական ատեն սպասելու պիտի ըս-
տիպուէիր: — Հիմա, պատասխան տուր,
Սիրանոյշ գեղեցիկ է:

Հայկ. (Շփոթած կերպով). Ե՛ս աղուոր է
չեմ կրնար ըսել... աչքերը քիչ մը (երկու
ցուցամասերը խաչածեւ երկու աչկերուն առ-
ջեւ կը դնէ շիլ նայով մեկը հասկցնելու հա-
մար):

Զար. Հասկցայ. ամէն մարդ իր ճաշակին
համեմատ բանի մը կը հաւնէ:

Հայկ. Յետոյ, (կաղալով կը բալէ):

Զար. Խնչպէս:

Հայկ. Այո՛, քիչ մը. (նոռն կը կաղայ):
Յետոյ (մեկ ուսը վեր կ'առնէ):

Զար. Խնչ ըսել է:

Հայկ. Քիչ մը. (ուսը միշտ վեր բռնած):

Զար. Կո՞ւզ ունի: (Հայկակ հաստատական
նշան կ'ընէ):

Զար. Բա՛հ. գուցէ շատ խելացի է եւ ա-
նոր համար դուն ալ...:

Հայկ. (Շփոթելով). Չեմ կարծեր, ան-
գամ մը միայն խօսելը իմացայ: Հայրը տես-
նելու համար իրենց տունը դռցիր էի, ինքը
եկաւ դուռը բացաւ. « Հարիտա տունը դէ,
ըսաւ. աւանատ, էջէս. տընա »:

Զար. (Ապշած). Կարելի բան չէ՛:

Հայկ. Ուրիշ օր մըն ալ տունին տալէն
կ'անցնէի, իմացայ որ սպասուհիին հետ կը-
ռիւ կ'ընէր եւ անանձի կը դարնէր խելո՛ւ աղ-
ջըկան որ թշուառին ձուլը փողոցէն կի-
մացուէր:

Եար. Իրաւոր ըսածիւ չեմ հաւատար.
ատանկ մէկու մը հե՞տ պիտի ամուսնանաւ:

Հայկ. Ինչո՞ւ չէ:

Զար. Շիւ, կաղ, կուզ, աղջիկ մը...:

Հայկ. (Մանր). Գեղեցկութիւնը կ'անցնի
խոյ տգեղութիւնը միշտ կը մնայ:

Զար. Տգէտ աղջիկ մը, չար, անկիրթ,
տգեղ կին մը... սպասուհին ձեռողը օր
մըն ալ քեզ կը ձեծէ:

Հայկ. Ինձի՛ ձեծէ, ինձի պիտի ձեծէ՛:

Զար. Խնչ աղուոր ընտանիք մը պիտի
կազմէք: — Բայց շիտակը ըսէ, ինչո՞ւ հա-

մար օրիորդ Սիրանոյշը կը սիրես:

Հայկ. Որովհետեւ հարուստ է. էն քիչը
քսան հազար ոսկի դրամօժիտ ունի: Գիտես,
պզտիկ բան չէ այսչափ դրամը...: Պր.
Գարեգին կուգայ կուր:

Զար. Ատա՞նկ է, կը նայինք: (Դուռն
կ'երկէ):

ՏԵՍԻԼ Զ.

Գար. (Ներս մտնելով). Աղջիկս հիմակ
կուգայ... վրան քիչ մը շտկէ... ա՛հ. ի՞նչ
ուրախութիւն որ, Պ. Հայկակ, ձեր բարձր
գիտութիւնը կը գնահատուի...:

(Դուռնէն ծանր քայլերու ձայն կը լսուի,
Հայկակ դուռը կը բացայ: Զարուհի ներս կը
մտնէ ձեռքը բանուած բարձով մը, որու վրայ
եռու գլուխ մը դրուած է):



Ջնյի. (Բարկուքեցնէ դեղնելով) Էշու գը-
լուխ մը:

Գար. (Ապշած). Էշու գլուխ մը:

Զար. Իրեն պէս գիտուններուն ասանկ
կը վայլէ:

Իար. Բայց կը կարծէի, թէ Տէր Տօք-
թօրարան, որ դուք ալ համոզուեցաք թէ...:

Զար. Թէ՛ Տէր Հայկակը աշխարհիս ա-
մէնէն տգէտն է:

Հայկ. Վրաս կը խնդայ կոր, փոխարէնը պիտի հանեմ (մեկուսի) :

Գար. Իրա՛ւ կը ըսէք, հապա ես ալ ելեր աղջիկս կուտայի կոր :

Ջար. Որիորդ Սիրանոյշին ձեռքը աւելի արժանաւորին ընծայեցէք :

Գար. (Հայկակի) . Յանցանքը իմն չէ, բարեկամս, վճիռը տրուած է : (Մեկուսի) Երթամ Սիրանոյշի ըսեմ որ պարապ տեղը : գայ : (Կը մեկնի) :

ՎԵՐՋԻՆ ՏԵՍԻԼ

Հայկ. (Թաւկուքեամբ Ջարտ. հիի) . Միտքդ պիտի հասկցնե՞ս :

Ջար. Թէ ինչո՞ւ համար ամուսնութիւնդ արդիւնցի . որովհետեւ կազ, կուզ, չիլ, տգէտ, չար քոյր մը ունենալ չեմ ուզեր : (Շոյելով Դարեգիներ) կին մը որ իմ սիրելի եղբայրս դժբաղդ պիտի ընէր : Գնա՛, աղէկ աշխատէ, քննութիւններդ անցուր պէտք եղածին պէս. ես քեզի կը խոստանամ Օր. Սիրանոյշէն աւելի սիրուն քոյր մը պիտի գտնամ, նի թէ եւ քիչ մը աղքատ ըլլայ, բայց իմ աղբարիկս երջանիկ ընէ :

Թարգմ.

ՋԱՐԵՆՆ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԴԵՍՏՈՒՆԵՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՊՂՋՈՒՆԵՐՈՒ ՎՃԱՐԱՐԱՆԻ ՄԵՋ

« Հաստատել խորհելու, զգալու գործելու սովորութիւններ . տիպանոր մէջն է ամբողջ դաստիարակութիւնը » :

Բ. — ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

41. — Երբ վարժուհին բացակայ է

Առակ մը կայ, գիտե՞ք, « Երբ կատուն տունը չէ՝ միները պար կը խաղան » . այսինքն թէ՛ երբ վարժուհին ներկայ չէ, աշակերտներն իրենց պարտականութիւնը չեն կատարեր եւ փոխանակ աշխատելու կ'գրօսնուն : Ինչո՞ւ համար անմիտ մկներուն նմանիք՝ որ մէկ բռնէ կը վախնան, կա-

տունն տուն դառնալէն, իրենց թշնամիէն : Ուրեմն ձեր վարժուհին ձեր թշնամի՞ն է : Ո՛չ. դուք կը սուրվիք որովհետեւ կը փափաքիք ուսանիլ . դուք հնազանդ էք, որովհետեւ գիտէք որ առանց հնազանդութեան ոչ մի յառաջագիմութիւն պիտի ընէք : Գիտէք նաեւ, որ կատարեալ հնազանդութիւնը, ինչպէս եւ կատարեալ բարեկամութիւնը կը գործադրուի նոյն իսկ այն ժամանակները այն անձերը ներկայ չեն, որոց հետ կապ չած են : Ձեր վարժուհին վայրկեան մը դասարանէն հեռանալուն համար պէտք չէ որ մոռնաք դէպ անոր ունեցած հնազանդութիւննիդ ու յարգանքնիդ : Վարժուցեք հնազանդիկ սիրով եւ ձեզ պարտականութիւն սեպելով եւ ոչ քե վախնալով :

42. — Աւստիւստեան մեջ յարաւեւութիւն

Երիտասարդութեան մէջ փոփոխութիւն եւ այլազանութիւն կը սիրուի : Շարունակ մի եւ նոյն աշխատութիւնը ձեզ կը ձանձրացնէ, ձեր եռանդը կը թուլնայ ու ձեր ճաշակը կը պակսի : Եւ կամ այսօր եռանդով լի էք, որովհետեւ նոր տետրակ մ'էք աւեր եւ կամ նոր ձեռագործ մ'էք սկսեր : Քանի մ'օրէն յետոյ այդ տետրակը կամ այդ ձեռագործն այլ եւս ձեզ չեն հետաքրքրեր : դուք յարատեւութիւն չունիք :

Ձանացեք ձեր աւստիւստեան մեջ յարաւեւել, առանց ասոր ոչ մի յառաջգիմութիւն կրնաք ընել . որովհետեւ այսօր լաւ կ'աշխատիք, վաղը գէշ, եւ գէշ աշխատութիւնը կ'ոնջապնէ լաւ աշխատութեան պոռուղը :

Դպրոցական կեանքը պատկերն է ձեր ապագայ առաւել դժուար եւ ընդարձակ կեանքի : Գուցէ այն ժամանակ ալ այս օրուան պէս աշխատութիւններ պիտի ունենաք ընելու, պարտականութիւններ կատարելու . տուն մը հոգալու . ծնողներ՝ որոց պիտի նուիրէք ձեր բոլոր խնամքը : Եթէ այժմ յարաւեւութեամբ չաշխատիք՝ յետոյ գեշ անսկիւններ պիտի լինիք, որովհետեւ վարժութիւն չըրիք ձեր գործերը շարունակաբար ընելու :

43. — Ի՞նչ որ կ'ընես՝ լաւ ըրի

« Լա՛ւ ըրէ՛, ինչ որ կ'ընես » կ'ըսէ առած մը, եւ այս խօսքն որ գրատախտա-

կին վրայ գրուած կը տեսնէ Վարդուհին, կը խնդայ, որովհետեւ անոր իմաստը չը հասկնար. — Օրիորդ, ըսաւ վարժուհին, այս ի՞նչ կը նշանակէ: Ինձ կը թուի թէ՛ մարդ լաւ կ'ընէ ինչ որ կ'ընէ: Այն ատեն վարժուհին կը բացատրէ այս առածին նշանակութիւնը:

— Վարդուհի, ըսաւ անոր, երբ գրեք բան մը կ'օրինակես կամ ձերմակեղէն կ'արդուկես, արդեօք լաւ կ'ընես: Երբ կար կը կարես եւ կամ բանի մ'եզերքը կը դարձնես, արդեօք հսկառակ կողմը լաւ կ'ընես: Ինչ որ կ'ընես, լաւ կ'ընես. ո՛չ, միտքդ ուրիշ տեղ է, մատներդ ուրիշ, միտքդ ուրիշ բանով կ'գրադի, մատներդ ուրիշ, եւ ահա ասոր համար է որ այն բանը չես ըներ, ինչ որ ընել կը ձեռացնես, կամ լաւ եւս է ըսել, կէս մը կ'ընես, գէշ կ'ընես:

Լա՛ւ ըրէ, ինչ որ կ'ընես: Այսինքն խորհէ միայն ըրածիդ վրայ, ուրիշ բան մի՛ խորհիր: Զանք ըրէ գործդ ամբողջ եւ կատարեալ ընել:

44. — Զբօսանքներու ժամանակ

Զբօսանքները ձեզ տրուած են աշխատութենէ հանգստանալու եւ մտքերնիդ ուրիշ բանով մը հանգարտեցնելու համար, որպէս զի առաւել թարմանաք եւ առաւել եռանդով վերսկսիք ձեր գործն, երբ դասի զանգակը հնչէ:

Զբօսանքներու ժամանակ պէտք է սրտանց ուրախանաք, նոյնպէս պէտք է բոլոր սրտով աշխատիք ուսանելու ժամանակ:

Խղճամիտ լաւ աշակերտ մը այնչափ դու՛ է, երբ իր պարտականութիւնը լաւ կատարել է, և մեծ ուրախութեամբ կը վայելէ խաղի հաճոյքը: Պէտք չէ զոյգ զւյգ ծանրութեամբ քալել փոխանակ խաղալու, անկիւններ փնտռել արտառոց բաներ խօսելու համար. պէտք չէ նաեւ նստիլ կարդալու կամ կարելու համար այն միջոցներուն, որ ձեզի տրուած է մարմնական մարզանքներ ընելու համար: Ամէնքդ միասին կատարեցէք ձեր զբօսանքը, անջառ խումբեր մի՛ կազմէք. բիրտ կերպով իրար մի՛ հրմշակէք, ձեր տկար կամ խեղանդամ ընկերները մի՛ արհարմարհէք: Զբօսանքի ժամանակ ինչ-

պէս եւ կեանքի ամբողջ ընթացքի մէջ, պէ՛տք է լինի բարի, բաղք, սիրալի եւ ազնիւ:

45. — Զանաւոր լինիմք ձեռարուեսներու մէջ

Սիրանոյշ կ'պահանարէ ձեռագործը: Կ'ըսէ, թէ երբ դպրոցէն ելնէ՝ շատ ժամանակ պիտի ունենայ կարել, գուլպայ հիւսել, նշանագրեր դնել սորուելու համար: Կ'ըսէ նաեւ, թէ դպրոց կ'երթայ իր ուսման վկայականը պատրաստելու համար եւ թէ ծրագրին մէջ եղած դասերու ու պարտականութիւններու պատրաստութենէն աւելի կարեւոր բան չկայ:

Սիրանոյշ կը սխալի, լաւ չխորհիր: Դպրոցին մէջ ինչ որ կ'ուսուցանեն կարեւոր է եւ օգտակար: Զեղ տրուած ձեռագործի դասերը դպրոցէ ելնելէ վերջ ալ պիտի չգըտնէք: Երբէք ձեր մայրը ժամանակ պիտի չունենայ ձեր վարժուհին պէ՛ն ձեզի վարժեցնելու: Եւ թէ խորհեցէք որ ձեռագործի վարժութիւնով է, որ պիտի կրնաք փաք եղած ժամանակ իսկ ձեր ընտանիքին մեծ ծառայութիւններ ընել: Զեր ասեղը պատուական միջոց մը պիտի լինի ձեր մօրն օգնելու, որ միշտ աշխատութեամբ բեռնաւորուած է. կրնաք նորոգութիւնները դուք ընել, որոնք զինք կը յոգնեցնեն եւ պիտի կրնաք տնտեսել այն ստակը՝ որ պիտի վճարեն գործաւորուհիի մը ձեր ըրածն ընել տալու համար: Սիրեցե՛ք ձեռարուեսներ, այսպէսով երբեք պիտի չձանձրանա՛ք:

46. — Ինչո՞ւ համար կ'աշխատիս դպրոցին մէջ

- Մարիամ, ինչո՞ւ համար կ'աշխատիս:
- Մըցանակներ ստանալու համար:
- Իսկ դո՛ւ, Վարդուհի՞:
- Ծնողքիս հաճոյք պատճառելու համար:

— Դո՛ւ. Սիրանոյշ:

— Շատ լաւ չգիտեմ թէ՛ ինչո՞ւ... Թերեւս ծնողքիս եւ վարժուհիս հնազանդելու համար, որոնք կը փափաքին որ ես աշխատիմ:

Երեքդ ալ իբրաւունք ունիք տղաքս, սա կայն ձեզմէ ոչ մին բուն պատճառն ըսաւ,

որուն համար ձեզի դպրոց կը զրկեն և դուք կ'աշխատիք: Միայն հնազանդելու, սիրելու կամ նմանելու համար չէ, որ պէտք է աշխատիք: Դպրոց կուգան մասնաւորապէս ուսանելու, ազնուանալու, կատարելագործուելու համար:

Շատ լաւ է մօրմէն կամ վարժուհիէն ստանալիք մրցանակին վրայ խորհիլ, բայց աւելի լաւ է ինքնիրեն ըսել. Ուսանելով միտքս, հոգիս, նկարագիրս կը բարձրացնեմ. իմացականութիւնս, տեղեկութիւնս կ'ընդարձակեմ եւ կեանքի մէջ կրնամ լաւ տեղ մը բռնել, պարտականութիւններս լաւագոյն կերպով կատարել եւ ուրիշներուն սուսանել բարիք ընել:


47. Մեր դպրոցական ընկերները չմոռնանք

Պզտիկ աղջիկներ, դուք չէք կրնար երևակայել և ոչ ալ մէկդ կրնաք գիտնալ, թէ կեանքը ձեզի ինչ վերապահած է: Ձեր մէջէն ոմանք թերևս բարձր դիրք մ'ունենան, ոմանք համեստ դրութեան մէջ մնան և ոմանք ալ աննշան կեանք մ'ունենան, թշուառ և տխուր:

Եթէ դպրոցական տարիներուդ մէջ իրար սիրած էք, միշտ ուրախութիւն պիտի զգաք իրար կրկին տեսնելով և կրկին իրար գտնելով որչափ ալ ձեր կենցաղավարութիւնը տարբեր լինի: Ուրախութեամբ պիտի յիշէք ձեր երիտասարդութեան օրերը, ձեզ ուրախութիւն պիտի պատճառէ իրարու փոխադարձ ծառայելը, օգնելը, ինչպէս կընեն մէկ ընտանիքի անդամները:

Ձեր մէջէն անոնք, որ երջանիկ պիտի լինին ամէն կերպ պիտի աշխատին նեղութեան մէջ գտնուողին օգնել, սփոփել, մխիթարել: Հասցաւ միտքերնիդ դուք իրար չը մոռնալ և ջեր միջեւ բարեկամութեան և անձնուիրութեան կապ մը կազմել, որ ոչ մի բանով խզուի:

ՏԻԿԻՆ, Փ. ՀԱՉԱՐԱՊԵՏՅԱՆ



ԴԻՏԱԿԱՆ ՎԷՊ

ԹԻԻԼ ՎԵՐՆ

ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ՎԵՐՈՆԸ

(Շաբաթակցութիւն 29րդ թիւն եւ վերջ)

ԽԻ.

Երբ աչքերս բացի, արեւին լոյսը, զոր երկար ատենէ ի վեր կարօտցեր էի, զիս կը շլացնէր. Հանսի ձեռքը զգացի որ մէջքէս կը բռնէր, իսկ միւս ձեռքով՝ քաջարի որսորդը՝ հօրեղբայրս կը վերցնէր: Թէեւ վերաւորում չէի, սակայն բոլորովին պարտասարեկ էի: Խառնարանին դուրս նետուելով լեռան կողին վրայէն վար գլորած ժամանակս՝ Հանս բռնեք էր գիս եւ ստոյգ մահէ մը աղատելու:

— Ո՞ր ենք հարցուց հօրեղբայրս, կարծես նեղանալով՝ երկրիս երեսը հասնելուն:

— Իսլանտայի ցամաքին վրայ, ըսի:

— Նէյ, պատասխանեց որսորդը, գըլուխը օրօրելով:

— Ի՞նչպէս չէ, գոչեցի տեղեւ վեր ցատքելով:

Փոխանակ յաւերժական ձիւնով ծածկուած գագաթ մը տեսնելու, ինչպէս որ ըլլալ պէտք էր Իսլանտայի նման կղզիի մը համար, ճամբորդը ընկերներս ու ես արեգակի կիզիչ ճառագայթներուն տակ այրող լեռան մը վրայ կը գտնուէինք:

Մեր գլխուն վերեւ, առառաւելն 500 ոտք բարձրութեան մը մէջ հրաբուխի մը խառնարանը կը բացուէր, ուրիշ քառորդ ժամը անգամ մը բացէ սիւն մը կը ցայտէր: սաստիկ պայթիւնով մը եւ իրեն հետ կը բերէր չեչաքաղէ, մօխիւրի և լաւայի կոյտեր: Ասկէ վար՝ խիստ ցից զառիթափի մը վրայ հրաբխամէտ նիւթերը կը տարածուէին: մինչեւ 7-800 ոտք խորութեան մը մէջ: Լեռան խաբիսը կը կորսուէր կանաչադարձ ծառերու պսակի մը մէջ: Քանի մը մղոն տարածութիւն ունեցող կղզիի մը վրայ կը

գտնուէինք, բայց աշխարհիս ո՞ր մասին վրայ ինկած էինք:


— Ասիա հասած ենք, գոչեցի երեւակայութեանս գրգռումին տակ, Հնդկաստանի եզերքին վրայ, Մալայեան արշիպելագոսին մէջ:

— Հապա կողմնացոյցը, ըսաւ հորեղբայրս, միշտ հիւսիսը ցոյց կուտար մեր բռնած ուղղութեան մէջ. կարելի չէ որ այս գործիքը սխալի:

կենդանիներու երեւոյթ մը ունէինք. սակայն Հանս ետեւէն վազեց ու բռնեց: Հորեղբայրս ալ հասաւ եւ հարցապնդումը սկսաւ:

— Այս լեռան անունը ի՞նչ է բարեկամս. հարցուց ուսուցչապետը գերմաներէն:

Տղան չպատասխանեց. հորեղբայրս նոյն խօսքը կրկնեց տնգլիերէն, սակայն պատանին միշտ նոյն լռութիւնը կը պահէր: Իտալերէնը փորձենք, ըսաւ հորեղբայրս եւ տը-



— Կրնայ ըլլալ որ հիւսիսային բեւեռ հասած ըլլանք:

— Ո՛հ, ոչ:

Բաւական ժամանակ այսպէս՝ երեւակայութիւններնուս ծնունդ տուած գաղափարները իրարու կը յայտնէինք երբ հեռուէն նշմարեցինք տղայ մը: Ոտահակը մեզ տեսածին պէս փախչիլ սկսաւ. եւ իրաւունք ալ ունէր, որովհետեւ կիսամերկ, խանձած վիճակնուս մէջ մարդերէ աւելի տարբեր

դուն դառնալով.

— Dove noi siamo? Հարցուցաւ:

Տղան զարմացական երեւոյթ մը առաւ, յայտնի էր որ կը հաօնար, բայց չպատասխանեց:

— Թշուառակա՛ն, գոչեց հորեղբայրս բարկութենէն բլթելով, պիտի խօսի՞ս. եւ ստահակին ականջէն բռնելով ցնցեց.

— Come si norma questa isola?

— Stromboli, պատասխանեց պզտիկը

եւ պրծելով փախաւ :

— Սթրոմպօլի՛, գոչեցինք հօրեղբայրս ու ես միաբերան :

Ի՛նչ աղուոր, ի՛նչ հրաշալի ճամբորդութիւն մը ըրած էինք. հրաբուխէ մը մտած եւ հազար երկու հարիւր մղոն ճամբայ կրտելով ուրիշ հրաբուխէ մը դուրս ելած էինք :

Քիչ մը պտուղով ու ջուրով նախաճաշ մը ըրինք եւ դէպի կղզիին նաւահանգիստը ճամբայ ինկանք : Հօրեղբայրս միշտ կը մըրմուռար. « Բայց կողմնացոյցը, հապա կողմնացոյցը որ միշտ հիւսիսը ցոյց կուտար, ի՞նչպէս բացատրել ասիկա :

— Ամէնէն դիւրինը, հօրեղբայր, չբացատրելն է :

— Ի՞նչ ըսել է, ամօթ բան է որ Եօհաննէօմի ուսուցչապետ մը ջերմական երեւոյթ մը բացատրելու անկարող ըլլայ :

Խե .

Սթրոմպօլի ձկնորսները մեզի իբր նաւաբեկեալներ ընդունեցին եւ յանի մը օր ետքը, Սեպտեմբեր 4ին Վօլթիւրն շոգենաւով ճամբայ կ'ելլէինք դէպի Մարսիլիա, ուրիշ Համպուրի հասանք 9 Սեպտեմբերին : Չեմ կրնար նկարագրել Մարթայի ապշութիւնը եւ կրաւրպէնի ուրախութիւնը :

— Հիմա որ դիւցազն մը եղար, ըսաւ գեղանի Վիրլանտուհիս, ա՛յ մեզմէ չպիտի բաժնուիս :

Եւ ուրախութեան արցունք կը թափէր :

Ա՛յ երեւակայեցէք թէ մեր ժամանումը ի՛նչ աղմուկ հանեց Համպուրի մէջ : Շնորհիւ Մարթայի շատախօսութեան, մեր դէպի երկրիս կեդրոնը ճամբորդութեան լուրը ամէն տեղ տարածուեց էր, եւ ո՛չ մէկը ուզած էր հաւատալ. բայց Հանսի ներկայութիւնը եւ ուրիշ պարագաներ ամէն կասկած կը ցրէին : Այն ատեն հօրեղբայրս մեծ մարդ մը եղաւ. եւ ես ալ մեծ մարդու մը եղբորորդին : Համպուրի քաղաքը հանդէսներ սարքեց ի պատիւ մեզ եւ հօրեղբայրս ալ շատ մը բանախօսութիւններ ըրաւ մեր ճամբորդութեան պարագաներուն վրայ : Սաքնիւնէմի ծածկագիրը՝ քաղաքին թանգարանին նուիրեց :

Եւրոպայի ամէն կողմերէն շատ գիտուններ հօրեղբորս տեսութիւնները պախարա-

կել ուզեցին, սակայն դասախօսը գրիչ ու լեզու գործածեց իր կարծիքը պաշտպանելու համար :

Ես ալ իրեն տեսութիւնները չեմ կրնար ընդունիլ. իրաւ, կեդրոնական կրակի գոյութիւնը կասկածի տակ ձգող պղտիկ բաներ կան, բայց վստահ եմ որ այդ դժուարութիւնները կամաց կամաց պիտի հարթընդունին :

Բոլոր այս խնդիրներուն վառ միջոցին, հօրեղբայրս ամենամեծ վիշտ մը ունեցաւ. հակառակ իր պնդումներուն՝ Հանս կը մեկնէր իր երկիրը՝ Իսլանտան նորէն տեսնելու համար : Աւտու մը « Ֆարվալ » ըսաւ, ձեռքերնիս սեղմեց ու ճամբայ ելաւ. Նիթէ նուրէն Հանս մեզ տեսնելու չիգայ, ես պիտի երթամ Ռէյքեալիք, անոր այցելութիւն մը տալու :

Իբր վերջաբան, պարտիմ ըսել թէ այս Ուղեւորութիւնը՝ դէպի երկրիս կեդրոնը մեծ աղմուկ հանեց աշխարհի մէջ. ամէն լիզուով թարգմանեցին դայն, լրագրիւնները արտատպեցին, մեկնեցին, վիճեցին, պաշտպանեցին : Հօրեղբայրս իր կենդանութեանը իսկ կը վայելեր իրեն փառքը. մինչեւ անգամ Մր. Պարնըմ ելաւ առաջարկելու որ ուսուցչապետին անձը դրամով ցուցադրէ Ամերիկայի մէջ :

Բայց բոլոր այս պատիւներուն մէջ հօրեղբայրս հանգիստ չէր. դադարաւոր մը միշտ կը շարժուէր իր ուղեղը. այդ է կողմնացոյցի խնդիրը Վեց ամիսի չափ անցեր էր երբ օր մը հանս ծոյներու հասցածոյ մը կարգի կը դնէր, այդ կողմնացոյցը աչքիս գարկաւ. զարմանքէս չհրքայ աղաղակ մը զսպել. հօրեղբայրս փազեց եկաւ :

— Ի՞նչ կայ հարցուց :

— Տեսէ՛ք, այս կողմնացոյցը որ միշտ հիւսիսը ցոյց կուտար ճամբան, բեւեռները փոխած է եղեր : Հիմա մագնիսացած ասեղը հիւսիս նայելու տեղ դէպի հարաւ դարձած է :

— Այո՛, բայց ինչո՞ւ համար բեւեռները փոխուեցան :

— Երբ Լիւնայրօք ծովուն վրայ փոթորիկի բռնուեցանք, մեր մօտը պայթող գընտածեւ կայծակը յառաջ բերած ըլլալու է այդ երեւոյթը :

Հօրեղբայրս սկսաւ խնդալ : Ա՛յ անկէ

եաքը դասախօսը՝ գիտուններուն ամէնէն երջանիկն էր, իսկ ես՝ մարդերու ամէնէն երջանիկը, որովհետեւ սիրելի կրաւագէնս իր պաշտպանեալի դիրքը թողլով իբր մահուին եւ քեռորդի կարգ առաւ տան մէջ։

Թարգմ. ԶԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Վ Ե Ր Զ

Փ Ո Ւ Ր Ի Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ


ՍԿԻՋՐԷՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

Հ Ի Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Ք Ի Ն

ԳԼՈՒԽ ԻԺ.

ՅՈՒՆԱՍՏԱՆ. — ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ
(Շար. 29րդ թիւէն)

Աթենք միայնակ կը շարունակէ պատերազմը. — Որովհետեւ սպարտացուց Պաւսակիա թագաւորը Պարսից թագաւորին խօսքովը պատերազմէն քաշուեցաւ, Աթէնք մինակ մնաց Պարսից դէմ կռուող դաշնակիցներուն գլուխը. սակայն առանց վհատելու շարունակեց կռիւը։ Միլիադատէսի վառապանը դաւակը՝ կրմոն, մէկ օրուան



Թէմիստոկլէս

մէջ երկու յաղթանակ միանգամայն տարաւ թէ ցամաքի եւ թէ ծովու վրայ (466) եւ յարձակելով Թրակիայի Քերսոնէսին վրայ Պաքսից ձեռքէն խլեց այդ կտրեւոր նեղուցը։ Կիպրոսի մօտ ուրիշ յաղթանակ մըն ալ փառաւորապէս վերջացուց Մարական կամ Մետական պատերազմները։ Նոյն ատեն Պարսից թագաւորն ոտորագրեց դաշինք մը որով նոյն ատենի առիական յոյները՝ պարսից տիրապետութենէն ազատ մնացին.

պարսկական նաւատորմը եգէական ծովուն մէջ չէր կրնար մտնել (446)։

Աթենացի ժողովուրդը. — Աթէնքի մեծ եւ հիանալի ծառայութիւններ մատուցին անոր մեծանուն մարդերը, Միլիադատէս, Թէմիստոկլէս, Կիմոն, վերջապէս Արիստիտէս որ արդարադատ, ուղղամիտ եւ առաքինարարոյ ընթացքով այնքան գրաւեց դաշնակցաց վստահութիւնը որով անոնք յօժարակամ ու սիրով յանձնեցին Աթենացուց իրենց տորմիզները եւ պարէնները, պատերազմը ցվերջ շարունակելու համար։ Արիստիտէս, աշխարհի մէջ ամէնէն ճոխ պետական գանձը վարելէն ետքը երբ մեռաւ, այնքան չքաւոր վիճակի մէջ էր որ իր յուղարկաւորութեան ծախքը վճարելու չուի դրամ չէր թողուցած։ Այս ականաւոր մարդոց հետ միացնելու է փոփոխամիտ, ապերախտ, ապերասան այլ գեղեցիկն ու մեծին հիացումներովը միշտ խանդավառ աթենացի ժողովուրդը, որ աշխարհի ընծայեց անմրցելի դերազանցութեամբ նշանաւոր գեղարուեստագէտներ ու բանաստեղծներ։

Պերիկլէս. — Մարդ մը շատ տարիներ շարունակ այս ժողովուրդին հոգին եղաւ. Պերիկլէս՝ պերճախօսի համակիր ազդեցութիւնը գործածեց ամբոխին յուսի կիրքերը տանձելու եւ ազնիւ զգացումները ալ աւելի վարգացնելու համար։ Ամէն տարի ընդհանուր զօրապետ ընտրուելով իր երկիրը արտաքին յարաբերութեան պահով դիրքի մը մէջ դրաւ։ Ամէն կողմէ տաղանդներն ու հանճարները իր շուրջը հաւաքելով, իր ատենուան Աթէնքը՝ մտաւոր լուսաւորումի կեդրոն դարձուց։

Պերիկլէսի դարը. — Տեսնուեցաւ նաեւ այս թուականին մէջ, որ արժանապէս «Պէլլիկլէսի դար» կոչուած է. երկրի վրայ փայլած քաղաքակրթութեան մը ամենէ աւելի կենդանի փայլերէն մին։ Ասիկէ աւելի ինչ բաղդաւոր ու ծաղկեալ ժամանակ չին պատմութեան մէջ, երբ կարելի էր հանդիպիլ միեւնոյն քաղաքին մէջ, երկու բանաստեղծներու՝ Սոփոկլէսի ու Եւրիպիդէսին, ճարտասան Լուսիասին, անմայ պատմիչին Հերոդոտի, Մէսոն ատենագագէտին, բժշկութեան հայր՝ Հիպոկրատին, հնութեան կատակերգուի քերդուներէն առաջնոյն՝ Արիստոփանին, իր գեղարուեստագէտներուն

ամենէն հաշակաւոր՝ Զաքարիան, Բողիկնո-
ղին եւ Պարրատիսին, վերջապէս երկու
անմահ փիլիսոփաներու՝ Անաքսագորասին եւ
Սոկրատին։ Եթէ մտածենք թէ այս քաղաք
գեռնոր կորսնցուցած էր Եսթիլէսը եւ թէ
նոր պիտի տեսնէր Թուկիդիտէսը, Քսենո-
փոնն ու Պղատոնը։ զարմանալու չենք որ
Աթէնքը՝ Յունաստանի Ուսուցչուհին կոչած
ըլլան։

ԳԻՈՒԽ ԺԱ.

ՍՊԱՐՏԱԻ, ԱԹԷՆՔԻ ԵՒ ԹԵԲԷԻ ՆԱԽԱՆ-
ՉՈՏՈՒԹԻՒՆԸ (431-359)

Պեղոպոնէսի պատերազմէն մինչեւ Նիկիա-
կան խաղաղութիւն (431-421)։ — Սաղամի-
նէի յաղթանակէն (480) յետոյ Աթէնք՝ կը դ-
գերնակ ու ասիական յոյներու դաշնակցու-
թեան ցլուխն անցած էր շարունակելու հա-
մար պատերազմը Պարսից դէմ։ Պատերազմը
վերջանալէն յետոյ Աթէնք շարունակեց իր
դաշնակիցներէն գանձել ծանր տուրքը սա
պատրուակաւ թէ միշտ կալմ ու պատրաստ
ըլլալու է ետ մղելու համար նոր յարձա-
ղում մը։ Սակայն Աթէնք իր գոնձած այս
հարուստ դրամը թէեւ գործածեց ահարկու
նաւատորմիդի մը շինութեանը, սակայն
այդ դրամէն մեծ մաս մըն ալ յատկացուց
Աթէնքը վարդապետ նորանոր յիշատակա-
րաններու կառուցմանը։ Դաշնակիցները
սաղտկացան այս ծախքերը վճարելէ, եւ
այս մասին իրենց ըրած խնդիրքը ծայր
աստիճան անողորձօրէն մերժուելուն վրայ՝
դատերնին պաշտպանելու համար դիմեցին
Սպարտայի ու անոր պաշտպանութեամբ
կազմակերպեցին պամաքային դաշնակցու-
թիւն մը։ Թէրէացիները յարձակելով Ա-
թէնքի վրայ ընդհանուր պատերազմի նշան
տուին։ Երկար ատեն այս պատերազմը
անորոշ մնաց։ Հակեգեմոնացիները ամէն գա-
րունի կատպատակէին Ատտիկէն ու աւարի
կուսային երկիրը։ Աթենական նաւատոր-
միդն ալ ամէն ամառ Պեղոպոնէսի ծովե-
զերքներն արշաւելով կ'աւերէին։ Երրորդ
տարին (429) Պերիկլէս մեռաւ տիրող ժան-
տախտէն բռնուելով։ 421էն մինչեւ 426 թէ
սպարտացւոց թէ աթենացւոց յաջողութիւն-

ները գրեթէ համահասարակ եղան։ Սփազ-
դէրիա գործը այնպէս մը ցցուց թէ առա-
ւելութիւնը Աթենացիներուն կողմն է, բայց
սպարտացի Պրազիտաս զօրավարը Ամփիբո-
լիսի մէջ աթենացի կղէտն զօրավարին յաղ-
թելովը երկու կողմին ձեռք բերած պատե-
րազմական առաւելակշիւթիւնը նոյն մնաց,
եւ 421ին, աթենացի Նիկիասը ստորագրել
տուաւ զինադադարը որ իր տնունը կը կրէ։

Սիկիթան արեւմտեմբ (415-413)։ Ալկի-
պիադ. — Այս խաղաղութիւնը վերիվայր
կը դարձնէր այն քաղաքական հաշիւները
զորս կանխաւ ու խնամօք կարգադրած էր
Պերիկլէսի քեռորդին՝ փառատենչն ու փայ-
լուն Ալկիպիադ, որ իսկոյն քուարկել տը-
ուաւ Սիկիթական յանդուգն ու ձախորդ
արշաւանքը։ Իր հակառակորդներուն կող-
մանէ ամբաստանուելով թէ ինքն է նոյն
ատեն գիշերային ու գաղտնի կերպով կա-
տարուած մահէնական սրբապղծութեան մը
հեղինակը, Ալկիբիադ Աթենացւոց դատա-
պարտութենէն ահաբեկելով ապաստանեցաւ
Սպարտայի մէջ։ Սիկիթիա արշաւող աթենա-
կան բանակը բոլորովին ջարդ ու փշուր ըլ-
լալով Սիրակուսայի առաջ եւս, Ալկիբիադ
իր հայրենիքին յայտնի թշնամի Սպարտան
գրգռեց զօրացնելու համար Տէսեիան, այն-
պիսի կերպով մը, որով Ատտիկէն պաշար-
ուած կը համարուէր։ Աթենացւոց համար
բարեբաղդաբար՝ Ալկիբիադ Սպարտայէն ալ
խոյս տալ հարկադրուեցաւ։ Այս անգուսպ
ու փոփոխաբարոյ զօրավարը քաջուեցաւ Ա-
սիա, յաջողեցաւ Էլիզիոսի Տեսափեւնէն
փոխարքան համոզել եւ անորմէն ընդունած
ստակովը կազմակերպեց աթենական բանակ
մը ու յարձակեցաւ քիչ մ'առաջ իրեն ա-
պաստանարան եղող Սպարտայի դէմ։ Պեղո-
պոնէսացիներուն վրայ նուազին երկու մեծ
յաղթութիւններով հաջողեցաւ Բիւ-
զանդիոնի վրայ։

Սակայն Ալկիբիադի յողորդը ու փառա-
մուր ընթացքը զինքն իր արեւմտեցաց աչքին
նորէն կատկածելի ցցուցած ըլլալով, անգամ
մ'ալ դատապարտուեցաւ աքսորանքի եւ
հարաչար մեռաւ 404ին։

(Շարունակելի)



ՀՐԱՐԽԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Մարթինիքի դեղեցիկ գաղթականութիւնը կործանող ահաբեկող կեղերանական Ամերիկայի մէջ վերջին ժամանակներու տեղութեան միջոցին երեւան եկող հրաբխային գործունէութեան միակ արտայայտումը չեղաւ։ Տեսակ մը ներքին զօրութիւններու վերմիլում մը կը տեսնուէր որ ոչ միայն Անթիլեաններու մէջ կամ չըջալիս եզերքներուն վրայ ի յայտ կուգար, հապա կը տարածուէր անկէ անդին ալ մինչեւ այնպիսի հեռաւոր կէտեր որոնք առաջին ակնարկով դիտուելով բնաւ յարաբերութիւն մը ունենալ չեն երեւիր Ամերիկեան հարուածեալ երկրներուն հետ։

Եւ սակայն վերջին քանի մը ամսուան միջոցին իրարու յաջորդող երկրաշարժական ու հրաբխային երեւոյթներուն մէջ անանկ կապ մը կար որ առաջինները տեսնելով կարելի էր գուշակել անոր հետեւող երեւոյթներն ալ, Հրաբխային արտայայտումները՝ երկրի Ֆիզիքական կեանքին բնական գործողութիւններն են, ներքին ուժականութեան երեւոյթներն են որոնք իրենց օրէնքներն ունին, և այդ օրէնքները զորս մենք կը ճանչնայինք արդէն, հիմայ անգամ մը ևս ճշգրտած են։

Երկու երեք հարիւր հարաւուս գիտէնք որոնք այսօր գործունէութեան մէջ են, այսինքն ամեն վայրկեան կրնայ ըլլալ որ կենդանութեան նշան տան, իսկ հին հարուստներուն թիւը ասկէ շատ աւելի է։ Բոլոր այս հրաբուխները ըստ գիտութեան չէ որ ցանուած են երկրի մակերեսային վերայ, հասա հետեւելով ընդհանուր երեւոյթներու շարքի մը կանոններուն, որոնք ամբողջ երկրային կեղեւին վրայ զգալի ըրած են իրենց ազդեցութիւնը։ Դիտուած է որ հրաբուխներուն մեծագոյն մասը կը գտնուին կղզիներու մէջ կամ ծովերու մոտիկները, արգարե ովկէանոսը անոնց գործունէութեան մէջ էական դեր մը կ'ստանձնէ որովհետեւ երկրի մակերեսային ծծուող ջուրերն են որ հողագետին հրաշէկ միջոցին մէջ ոքսիտացումներ յառաջ բերելով

հրաբուխներու սկիզբ կուտան։ Եւ ջուրերու այս ազդեցութիւնը ամէնէն աւելի ըզգալի պիտի ըլլայ այն մասերուն մէջ որ հողային կեղեւը ամէնէն նուրբն է, այսինքն երկրագունտի վրէժով ամէնէն մեծ գիծերուն մէջ, հողային ծալքերու ամէնէն կքած կողերուն վրայ է որ սոյն երեւոյթի պատրաստութեան ամէնէն նպաստաւոր պայմանները գոյութիւն ունին։ Հետեւաբար հրաբուխները պիտի երեւան գան անդնդախոր ովկէանոսներու պարունակած ցից եզերքներու զառիթափերուն վրայ։

Երեք այսպիսի մեծ զառիթափներ կամ աւելի ճիշդը խոտիով հողային ջրքուածքներ կը կտրեն երկիր Միջօրէականին ուղղութեամբ, ասոնք կը համապատասխանեն ինդոնեզիական ովկէանոսին, Ատլանտեան ովկէանոսին և Հնդկաց ովկէանոսին, ասոնցմէ զատ կը տեսնուի խոտորնակի ջրքուածք մը որ կը համապատասխանէ Միջերկրականի ու անոր շարունակութիւններուն։ Այս զառիթափներուն շրջագիծը միշտ նշանաւորուած է հրաբուխներով, և նոյն իսկ հրաբուխները այնպէս մը ռահմանափակուած են այս զառիթափի գիծերուն վրայ՝ որ ասոնց շարունակութիւնը ձեւացնող ցամաքային ջրքուածքներուն վրայ միայ հրաբուխներ կրնանք գտնել։

Առաջին ամենամեծ զառիթափն՝ որ ինդոնեզիականին է կը համապատասխանէ նշանաւոր հրաբուխներու շրջանակ մը։ Արեւելեան կողմը կը գտնուին Նոր Զելանտայի խառնարանները Ֆիշի կղզիին, Սուատի արշիպելագոսին, Մոլուք և Փիլիպին արշիպելագոսներու խառնարանները որոնք հարիւրէ աւելի են, նոյնպէս Ֆորմոզայի սղիթաթարները ու Ճաբոնի 429 կոները Բուրիլեաններու և Բամբաթայի հրաբուխները։ Հիսիւսէն կը տեսնուին Ալէութեան կղզիներու 36 հրաբուխները որոնց շարունակութիւնը կը կազմեն Ալասքայիները։ Յետոյ Ամերիկայի երկայնքը իրարու կը յաջորդեն կարգ կարգ մարած հրաբուխներ։ Մեքսիկայ, Հասարակած, Բերու, Պելիւրա և Չիլի կը ներկայացնեն հրաբուխ գագաթներ վերջապէս հարաւային կողմը կը գտնուին հիսիւսային հրաբուխները՝ երեւելու և Թէօթի։

Ատլանտեանի մէջ՝ հրաբուխներու խուճ

մը ծնունդ կ'առնէ կրօնականտայէն. կ'անցնի Իսլանտայէն, կը շարունակուի գէպի Ասորեան, Գանարեան, Դալարի-գլխոյ կըզգիներէն, Քամերունէ, Համարածման կըզգին. Սուրը Հեղինէէ և Թրիթանէ:

Երրորդ՝ Հնդկական ովկէանոսի գաութափի հրաբուխները մեծ մասամբ մարած են ու կը կազմեն չըջանալ մը որ կը պարունակէ Քէրկիւէլէն, Սէն-Բօլ, Մատակաաքար, Քօփօրեանները, Արեւելեան Ափրիկէն ու Հապէշիտանը:

Միջերկրականի խոտորնակի գաութափի հեռաւոր սկիզբը կը կազմեն Անթիլեանները և Մեքսիկայի հրաբուխները, որոց շարունակութիւնն Սպանիոյ, Օվէրնիեայի, Իտալիոյ, Լեռնալեզագոսի, Կովկասի և Արեւել. Ասիոյ հրաբուխները. դէպի աւելի արեւելքը այս գիծը կը միանայ Հնդկաստանու և Սուտի հրաբուխներուն հետ:

Արդի ժամանակներուն մէջ այս վերջին խոտորնակի գաութափն է որ ամենասաստիկ կատաղութեան մը նշանները կուտայ իր ամբողջ երկայնութեան վրայ, և գիտեցէք որ այն երեւոյթը իր բարձրագոյն աստիճանին կը հասնին այն կէտերուն վրայ ուր այս վերջին խոտոր գիծը կը կտրէ Ատլանտեանի գաութափը՝ Անթիլեաններու մէջ. ինչպէս նաև Հնդկական ովկէանոսին՝ ի Քրաքաթօս որտ արգասիքները 1833 ին տեսնուեցաւ:

Դիւրին է ճշդել թէ 1900 ի սկիզբէն ի վեր տեղի ունեցած բոլոր հրաբխային ու երկրաշարժական երեւոյթները միշտ կատարուած են Միջերկրականի գաութափին վրայ և անոր շարունակութիւնը եղող հողային ջրբուծին վրայ:

Փետրուարին տեղի ունեցաւ Շամալիի երկրաշարժը, արեւելեան Կովկասի մէջ, յետոյ Միջերկրականի աւազանին զանազան կողմերը, Ֆրանսա, Սպանիա, Յունաստան, Ասիական Թուրքիա կրեցին այդ ցնցումներուն արգասիքը թեթեւ կամ ծանր՝ մինչդեռ միեւնոյն շարժումները կը նշանակուին Միջերկրականի գաութափին հակադիր մասին վրայ՝ Մեքսիկայի կողմերը:

Ապրիլ 18 ին առաջին ցնցումները կուտթեմալայի մէջ, երկու երեք քաղաքներ 4 20,000 բնակիչներով ամբողջովին կործանեցան: Միեւնոյն ժամանակ Շինկո,

Սան-Սալվաթօր և Սանթա-Մարիա հրաբուխները սկսան բորբոքել:

Գրեթէ նոյն օրերուն մէջ ամբողջ կեդրոնական Սմերիկա հողային պառակտումներու ասպարէզ դարձաւ. Ապրիլի առաջին օրերէն իսկ Մարթինիքի Բըլէ լեռը կենդանութեան նշաններ սկսաւ տալ, և Մայիս 2 ու 3 ին բորբոքումը սպառնական վիճակ մը կ'ստանար. ամսուան 5 ին ցեխի հեղեղ մը հոսեցաւ խառնարանէն և այս ամէնը մայիս 8 ի ահաւոր պայթումին ըսկիզբն երկանցն էին:

Դիմամբ պայթում կ'ըսենք հոս, որովհետեւ տեղի ունեցածը վայրկեանաբար կատարուող երեւոյթ մըն էր, նման կաթնայի մը որ կը խորտակի: Նոյն իսկ ճշդուած է թէ այս պայթումը, հանքերու մէջ կրիզու կապին պայթումներուն ամենայն եղանակաւ մը կատարուած էր: Կերեւի թէ Բըլէ լեռան կողին մէջ ահագին խռուջ մը բացուած կար ուր լեցուած ճնշուած էր կրիզուի նման կազ մը, խիստ դիւրարորոք և օդին հետ միանալով ամենասաստիկ պայթուցիկ մը կազմելու յատկութիւնը ունեցող: Զուրէրը թափանցելով հրաբուխին մէջ յառաջ բերեր են երկրային ցնցում մը որով այս գրպանը պատուելով պարունակած կազը դուրս պտտեցեր է երբ միեւնոյն ժամանակ լեռան խառնարանը ահագին ջերմութիւն մը կ'արձակէր:

Այս առաջին ցնցումով հրաբուխի պարծունէութիւնը չէ կասած դեռ Մարթինիքի մէջ, Մայիս 20 ին և նոյն իսկ վերջին օրերս նոր ցնցումներ ամենամեծ վտանգ մը կ'սպառնան կղզիին:

Ներքին զօրութեանց զարթնումը ըզզալի եղած է ամբողջ Անթիլեաններու մէջ ինչպէս նաև Կուստալուրի մէջ և ի Սէն-Վէնսան:

Մանրամասնութիւններու մէջ շմոնելու համար միայն յիշենք այն հրաբուխները որոնք կենդանութիւն առին Մեքսիկայի, Ֆլորիտայի, Հաւայիի, Սուտի մէջ որոնք ամէնքն ալ Միջերկրականի հողային ջրբուծութիւն գիծին վրայ կը գտնուին:

Սօսքերնիս ամփոփելով ըսինք թէ Բըլէ լեռան և Սէն-Վէնսանի երկրաշարժէ աւերեալ երկիրները 5000 մէթր բարձր ովկիա-

ԲԱՆԱԿԱՅԻՆ ՏՈՒՆՔԵՐ
 ԳՆԱՀԱՆՈՒՄԸ
 ԴՊՈՎԱԾՈՒՄԸ
 ԶԵՆՈՒՄԸ
 ԽՈՍՏՈՒՄԸ
 ԹՎԱԾՈՒՄԸ
 ԼՂՈՒՄԸ
 ԲԱՆԱԿԱՅԻՆ ՏՈՒՆՔԵՐ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊԵՐՊԵՐ, ՊԱՊԸ ԱԼԻ ԶԱՏԵՍԻ, ԹԻՒ 38. ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ստացած է տպագրական լոյր

Կազմակերպութիւններ

Եւ կը սպազդէ ամեն
տեսակ գործեր, ման-

ագործեր, հանդեսներ, օրգանականներ, հարսանեաց հեռախօսութիւններ, նամակագրութիւններ, այ-
ցախօրհրդեր, եւ տպագրութեան վերաբերեալ ամեն տեսակ պիտոյքներ: — Տպագրութիւն սեփական
2000է աւելի պատկերներ յանձնարողաց տպագրութեան տակ են ձեռք:

Անմիջեւի մատուցելու եւ հեղափոխութեամբ

գաւառներէն ալ կ'ընդունի ամեն տեսակ յանձնարարութիւններ:



ԶԱՆՐԱԳԻՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան միջոցներն
մասնակցողները պարտին սոյն կարգով կտրելով՝ իրենց գը-
րութեանց հետ զրկել Ծառագրութեան, Հախառակ պարա-
դային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ ձեռքէ կը ծախուի Պոլսոյ մէջ հատ
40, իսկ գաւառաց մէջ 50 փարսյ:

Կ. Պոլիս-Պապ ալի ճատէսի թիւ 38 ❖ ۱۳ درمعاذته باب على جاده سنده نومرو ۳۳

Թ Է Յ

الجمهورية اللبنانية

Ը Ն Տ Ի Ր

Թ Է Յ



Հ Ո Տ Ա Ի Է Տ

Թ Է Յ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Ե. Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ
հասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմիջեւի ածանութեամբ
գօհացում տալ նոյն իսկ էն խոտազահան թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ Եւ ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կ'
կատարուին ամենայն ճշգրտեամբ:

Առան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմագէտ կը յանձնարարենք ան-
ղամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, Ճէլալ-Պէյ խանի
կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա ժ Ա Ն

Ա ժ Ա Ն

Ա ժ Ա Ն